# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2023 թվականի N 87-Ա

ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023թ. ԲՅՈՒՋԵԻՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդհոդվածի 11-րդկետով և հիմք ընդունելով Գյուլագարակ համայնքի ավագանու 2023թ. փետրվարի 15-ի կամավոր խնդիրները ,դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին թիվ 14-Ա որոշումը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.2023թվականի 8-րդ Համահայկական խաղերում 4X400 մետր փոխանցումավազքում արծաթե մեդալի արժանացած Գյուլագարակի համայնքապետարանը ներկայացնող « Վանաձորի ատլետիկայի մարզադպրոցի» մարզիկներին՝ Ջեմմա Գրիգորյանին, Մերի Մկրտչյանին , Դիանա Սեյրանյանին , Նաիրա Բաղդասարյաին և մարզիչ Մարինե Հալաջյանին Գյուլագարակ համայնքի 2023թ. բյուջեի « Այլ մշակութային կազմակերպություններ» 4819 հոդվածից յուրաքանչյուր մարզիկին և մարզչին տրամադրել 20000 ՀՀ դրամ /ընդհանուր հարյուր հազար ՀՀ դրամ / դրամական մրցանակ:

**2.** Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ- | Կողմ 8(ութ) | Դեմ 0 | Ձեռնպահ 0 | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| Վարդանյան Խաչիկ | [signature] | - | - | - |
| Օհանյան Ռուսլան | [signature] | - | - | - |
| Սարգսյան Աիդա | [signature] | - | - | - |
| Նալբանդյան Նարեկ | [signature] | - | - | - |
| Մուրադյան Դավիթ | [signature] | - | - | - |
| Պառավյան Գոհար | [signature] | - | - | - |
| Այվազյան Սերյոժա | [signature] | - | - | - |
| Գրիգորյան Արսեն | [signature] | - | - | - |
| Այվազյան Վրույր | - | - | - | բացակա |
| Գևորգյան Համլետ | - | - | - | բացակա |
| Քալաշյան Վարսենիկ | - | - | - | բացակա |
| Թորոսյան Հրայր | - | - | - | բացակա |
| Տոնոյան Արփյում | - | - | - | բացակա |
| Գրիգորյան Թամարա | - | - | - | բացակա |
| Սարգսյան Ալիկ | - | | | բացակա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝